

Խոսք թարգմանչի

Ալեքսանդր Սերգեյի Ռիբինը ծնվել է 1983 թվականին ՌԴ Կալինինի շրջանի Կիմրի քաղաքում: Ավարտել է Տվերի համալսարանի բանասիրական բաժինը: Ազատ լրագրող է: Առաջին հոդվածը հրապարակել է «День и ночь» («Օր ու գիշեր») ամսագրում 2008 թվականին: Նույն թվականին ընդգրկվել է «Реформат», Իվան Բունինի եւ Վիկտոր Աստաֆեւի մրցանակաբաշխությունների ընդլայնված ցանկում: 2012 թվականին ընդգրկվել է «Дебют» մրցանակի ընդլայնված ցանկում՝ «Современный кочевник» (Ժամանակակից ֆոշվոր) պատմվածքով: Լուգանսկի ժողովրդական Հանրապետություն մեկնելուց առաջ ապրել է Վլադիվոստոկում: Տպագրվել է տարբեր գրական պարբերականներում:

Ներկայացվող հոդվածը վերցրել ենք «Нева» հանդեսի 2018 թվականի առաջին համարից¹:

Թարգմ.՝

ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

¹ АЛЕКСАНДР РЫБИН, Ниневийские христиане, «Нева», №1, 2018, էջ 121—157:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԻԲԻՆ

ՆԻՆՎԵԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ

ՄԱՍ 1. ՊԱՏԵՐԱԶՄ

2017-ի մարտին Մոսուլ քաղաք (երբ քաղաքը «Իսլամական պետություն» գրոհայիններից ազատագրելու լայնածավալ գործողություն էր իրականացվում) ուղեւորությունից ստացած ամենաուժեղ տպավորություններս մահապարտների պայթյուններից, տների բալկերում ընկած դիակներից, մահացող քաղաքից եւ նույնիսկ տասնյակ հազարավոր փախստականներից չէին: Ամենից շատ հիշողությանս մեջ տպավորվեց քրիստոնեական քաղաք Բահդիդան՝ այդ ուրվական քաղաքը: Ես երկու անգամ եղա այնտեղ: Երկրորդ անգամ՝ մայրամուտին. արեւն արդեն մայր էր մտել, եւ նրա դեղնակապտագույն լույսը մարում էր: Ժամանակն էր միացնել տների եւ շենքերի լուսավորությունը: Իրաքյան բանակի անցակետերում լույսերն արդեն վառվում էին: Բահդիդան թաղված էր մեռյալ խավարում: Պարզորոշ ուրվագծվում էին շենքերը, տները, եկեղեցիները («ռուսական կոնստրուկտիվիզմի» ճարտարապետական՝ ժամանակակից ոճով), եւ ոչ մի վառվող լույս: Հարյուրավոր տներ, տասնյակ փողոցներ, բոլորովին դատարկ ժամանակակից քաղաք: Լուսավորված էին միայն Իրաքի բանակի եւ դաշնային ոստիկանության մի քանի անցակետեր քաղաքի հյուսիսային մասում: Բահդիդան գտնվում է Մոսուլից 15 կմ հարավ-արեւելք: 2016-ի հոկտեմբերին, երբ սկսվեց Մոսուլի ազատագրման գործողությունը, այդ քաղաքն առաջիններից էր հետ գրավվել գրոհայիններից: Սակայն նույնիսկ հինգ ամիս անց քրիստոնյաները դեռ վախենում են վերադառնալ իրենց տները: Բահդիդայից 20 կիլոմետր հյուսիս գտնվում է Բարտելլա քաղաքը, դրանից եւս 10 կիլոմետր հյուսիս՝ Բաշիկա քաղաքը: Սրանք բոլորը քրիստոնեական վայրեր են: Դրանք էլ Բահդիդայի նման ուրվականներ են: Իրաքի քրիստոնյաները շարունակում են ապրել փախստականների ճամբարներում, ոմանք տեղա-

փոխվել են Իրաքյան Քուրդիստանի քաղաքներ: Զգալի մասն ընդմիշտ մեկնել է Եւրոպա եւ Ավստրալիա (Ավստրալիայի կառավարությունն առանձնահատուկ եռանդով օգնում է Իրաքի քրիստոնյա փախստականներին): 2003-ի ամերիկյան զավթման պատճառով սկիզբ առած քրիստոնյաների արտագաղթը Իրաքից շարունակվում է:

Քրիստոնյաները եւ սուննիները

Քաղղեական կաթոլիկ եկեղեցու հետեւորդ Աբրահամը եղբորորդու հետ իր մեքենայով Բարտեղայից վերադառնում է Այնքավա քաղաքը: Իրաքի բանակի եւ քրդական փեշմարգայի² անցակետերում, ցույց տալով անձը հաստատող փաստաթուղթ, նա պարտադիր ավելացնում է՝ «մասիհ» (արաբերեն՝ «քրիստոնյա»): Քրիստոնյան Բաղդադի եւ Իրաքյան Քուրդիստանի պաշտոնական իշխանությունների նկատմամբ բարեհակության գրավական է: Քրիստոնյաները, ինչպես եւ եզդիները, ամենաշատը տուժել են Իրաքում «Խսկական պետության»³ իշխանությունից: Ուստի պաշտոնական իշխանությունների համար նրանք հիմա բնական դաշնակիցներ են:

Ճիշտ է, իշխանությունները չեն շտապում օգնել իրենց դաշնակիցներին:

Բարտեղյում Աբրահամը սեփական տուն ունի: Նա պարբերաբար այցելում է իր ակուլթը: Հարկավ, այնտեղ ոչ մի նոր բան տեղի չի ունենում: Ամեն ինչ թալանվել է կա՛մ ԻՊ-ի երկամյա իշխանության օրոք, կա՛մ 2016-ի հոկտեմբերին Իրաքյան բանակի եւ քրդական փեշմարգայի զինյալ կազմավորումների հարձակման ժամանակ: Մի քուրդ, որը եւս տուն

² Փեշմերգա կամ փեշմարգա, փաշմերգե (քրդ.՝ Pêşmarge, քրդ.՝ پێشمەرگه, թարգ.՝ «դեպի մահ գնացողներ», «մահի երեսին նայողներ»), Իրաքյան Քուրդիստանի քրդական զինյալ զորամիավորումների ամբողջական անվանումը: Փեշմերգան առաջացել է քրդական անկախության շարժման սկսման հետ զուգահեռ 1890-ականներին: Կազմավորումները մեծ թափ են առել 1920-ականներին՝ Օսմանյան կայսրության փլուզումից հետո: «Փեշմերգա» անվանումը առաջին անգամ գործածել է քուրդ գրող, բանաստեղծ եւ քաղաքական գործիչ Իբրահիմ Ահմեդը որպես արաբական ծագում ունեցող եւ որոշ ժողովուրդների, այդ թվում նաեւ հայերի, մոտ տարածված «ֆիդայի» անվանման համանմանը: Համաձայն որոշ մասնագետների, փեշմերգան տարածաշրջանի ամենամարտունակ զորամիավորումներից մեկն է https://hy.wikipedia.org/wiki/Փեշմերգա#cite_note-phqնեսիսայդեր-1:

³ ԻՊ՝ «Խսկական պետություն» (ահաբեկչական կազմակերպություն, որն արգելված է աշխարհի բազմաթիվ երկրներում):

ունի Բարտեղայում, պատմեց ինձ, որ ալան-թալանի առումով կառավարական եւ քուրդ զինվորները ոչ պակաս ջանասեր են, քան ահաբեկչական կազմակերպության զինյալները: Փոխարենը տունը կանգուն է. պատերը, տանիքը, քարե ցանկապատը չեն տուժել ազատարարների օգուժի եւ հրետանու հարվածներից: Իրաքյան Քուրդիստանի մայրաքաղաք էրբիլի քրիստոնեական արվարձանում՝ Այնքավայում, Աբրահամն ապրում է ազգականների տանը: Թե որքան կշարունակվի դա, նա չգիտի: Բայց «դեռ վաղ է» վերադառնալ Բարտեղա: Սպառնալիքը դեռ առկա է: Քրիստոնյաների մեծ մասը, ում հետ ես շփվել եմ, համոզված է, որ ահաբեկիչները կարող են կրկին հարձակվել քաղաքի վրա:

Եւ միանգամայն հակառակ պատկերն է Մոսուլի սուննիական արվարձաններում եւ շրջաններում, որոնք ԻՊ-ի տիրապետության տակ էին երկու-երեք շաբաթ, նույնիսկ մի քանի օր առաջ: Այնտեղ բնակիչները փութեռանդորեն խաղաղ կյանք են հաստատում նոր իշխանության ներկայությամբ: Երբ 2014-ին ԻՊ-ը լայնածավալ հարձակման էր անցել Իրաքի հյուսիսում, սուննիական շրջաններից փախուստի դիմած քաղաքացիական անձանց թիվը այնքան էլ մեծ չէր: Փախչողները հիմնականում իսլամի ոչ սուննի հոսանքների պատկանող արաբներ էին, այլ կրոնների ներկայացուցիչներ եւ քրդեր: Ուստի գրոհից առաջ հենց միայն Մոսուլն ուներ 800 հազարից մինչեւ 1 միլիոն քաղաքացիական բնակչություն (տարբեր աղբյուրներ տարբեր տվյալներ են նշում, բայց ամեն դեպքում Իրաքի՝ բնակչության թվով երկրորդ քաղաքը շարունակում էր մնալ երկրորդը նույնիսկ ԻՊ-ի օրոք): 2004 թվականի տվյալներով՝ նրա բնակիչների թիվը գնահատվում էր 1,8 միլիոն մարդ:

Մարտի առաջին օրերին սկսվեց Արեւմտյան Մոսուլի (քաղաքի այն մասը, որը գտնվում է Տիգրիսի աջ ափին) ազատագրման հերթական փուլը: Ես օտարերկրացի այլ լրագրողների հետ մեկնեցի քաղաքի հարավարեւմտյան մասում գտնվող Զոսեթ թաղամաս:

Ջոսեֆ

Օդուժի անդադար գվվոց երկնքում. պողոտայի քարե ցանկապատի հետեւում բացազատվում է «Աբրահամ» հրասայլը. նրա մոտերքում խոնված են «Համվի» զրահամեքենաները, սեւ ծուխ է բարձրանում այն

թաղամասից, որտեղ տեղակայվել են ԻՊ-ի զինյալները: Այսպիսին է Զոսեքի համայնապատկերը:

Մտնում եմ այն տունը, որը Իրաքի դաշնային ոստիկանությունը բառացիորեն մեկուկես ժամ առաջ է գրավել: Տանիքին տեղավորված ոստիկանները կրակում են այն ուղղությամբ, որտեղ ենթադրաբար դիրքավորվել է հակառակորդի դիպուկահարը: Երկրորդ հարկի միջանցքում՝ հենց հատակին պառկել եւ հանգստանում են արագ արձագանքման խմբի ոստիկանները. ոմանք քնած են, ոմանք բջջային հեռախոսներով հաղորդագրություններ են ուղարկում ընկերներին եւ հարազատներին (Մոսուլում ինտերնետն ու հեռախոսակապը գերազանց են աշխատում): Առաջին հարկի հյուրասենյակում սպաները ծխում են՝ քննարկելով առաջ շարժվելու ծրագրերը: Շինության նկուղում տանտերերն են՝ հինգհոգանոց ընտանիքը. ընտանիքի հայրը, կինը, նրանց որդին եւ մետաղյա մահճակալներին գամված ծանր հիվանդ տատիկն ու պապիկը: Նրանք սունիներ են: Չէին լքել քաղաքը, երբ այն անցել էր ԻՊ-ի իշխանությանը: Նրանք ԻՊ-ի մասին ոչ վատ խոսք են ասում, ոչ էլ՝ լավ: Ասում են. «Ուրախ ենք, որ իրաքյան բանակը եկել է»: Ընտանիքի հայրը՝ Աբդուլլահը, նշում է, որ ինքը նկարիչ է (նա իսկապես ստեղծագործող մարդու արտահայտիչ դեմք ունի) եւ ԻՊ-ի օրոք աշխատել է մասնագիտությամբ: Նա մանրամասներին չի տրվում: Զոսեքը սուննիական շրջան է: Այստեղ թալանի հետքեր չկան: Տեղի բնակիչներից մեկը՝ Համադը, որը ԻՊ-ի օրոք փախել էր Բաղդադ, պատմում է, որ երկու տարվա ընթացքում իր տանը ոչնչի ձեռք չեն տվել: «Նույնիսկ մեքենան նույն ձեռով կանգնած էր տան բակում, ինչպես թողել էինք», — ասում է Համադը:

Մոսուլի սուննիական շրջաններում եւ սուննիական արվարձաններում ազատագրումից մի քանի օր անց արդեն փոքր խանութները բացվեցին, մեկ շաբաթից շուկաներն սկսեցին գործել այնպես, ասես այստեղ պատերազմական գործողություններ չեն եղել: Շուկան մերձավորաբերեցյան ցանկացած քաղաքի սիրտն է: Եթե այն նորից գործում է, ապա շրջակայքը եւս կենդանանում է: Նույնիսկ Մոսուլից հարավ գտնվող Համամ Ալի քաղաքում, որը կառավարությունը համարում է ԻՊ-ից հետ գրավածներից ամենաանհուսալին (այնտեղ ահաբեկիչները վայելում էին տեղի բնակիչների առանձնահատուկ բարեհաճությունը, ուստի հիմա փողոցները լի են զինված պարեկներով եւ ամրացված անցակետերով), վաղ առավոտից մինչեւ մայրամուտ շուկայում եռուզեռ է:

Իսկ ահա ազատագրված քրիստոնեական քաղաքներում շուկաները չեն վերաբացվում: Դա պայմանավորված է այն բանով, որ մահապարտի ինքնապայթեցումն ավելի հավանական է մարդկանց զանգվածային կուտակման վայրերում՝ շուկայում, եկեղեցում աղոթքի ժամին, հարսանիքի կամ դպրոցում դասերի ժամանակ:

Երբ ամերիկացիները եկան

Քրիստոնյաները, ինչպես եւ եզդիները, խոսում են այն մասին, որ ԻՊ-ն իրենց նկատմամբ ցեղասպանություն է իրագործել (եւ շարունակում է դա ահաբեկչական գործողությունների միջոցով): Սակայն միջազգային մակարդակով, նույնիսկ Իրաքի կառավարության մակարդակով, այն մինչ օրս չի ճանաչվել: «Ցեղասպանություն եղել է, թե՛ չի եղել, կամ՝ ի՞նչ էր դա», նմանաբնույթ հարցերը հետաձգվել են մինչեւ Մոսուլում ռազմական գործողության ավարտը: Անշուշտ, քաղաքն ազատագրվելուն պես, եւ դա հասկանում է Իրաքի վիճակից թեկուզ փոքր-ինչ գլուխ հանող յուրաքանչյուր ոք, կսրվեն հակասությունները քրդերի եւ արաբների, սուննի արաբների եւ շիա արաբների միջեւ, ներքրդական խնդիրները: Եւ կրկին Իրաքի քրիստոնյաների եւ եզդիների հարցը մի կողմ կմղվի: Իսկ նրանց հիմնական խնդիրն այն է, որ չունեն կառավարական որոշմամբ պաշտոնապես ճանաչված իրենց տարածքը: Իրենց ներգաւառը (enclave), իրենց ինքնավարությունը. ինչպես ուզում է կոչվի, բայց լինի իրենցը՝ սեփականը: «Նրանք, ասես, եւ կան, եւ չկան», — տեղացի քրիստոնյաների մասին ասում է ամերիկացի լեւին, որ երեք տարի աշխատում է Իրաքյան Քուրդիստանում: — Պաշտոնապես նրանք նույն իրաքցիներն են, ինչ սուննիները կամ շիաները: Հետեւաբար, նրանց շրջանները, գյուղերը, եկեղեցիները ոչ մի հատուկ կարգավիճակ չունեն: Թեեւ ակնհայտ է, որ նման կարգավիճակ նրանց պետք է: Դա թույլ կտա ավելի արդյունավետ իրականացնել ծրագրեր նրանց պաշտպանության, նրանց ավանդույթների պահպանման ուղղությամբ եւ այլն: Որովհետեւ Իրաքում քրիստոնյաները փոքրամասնություն են: Եւ ինչպես ցույց տվեց ԻՊ ի հայտ գալու հետեւանքով առաջացած իրավիճակը՝ ահաբեկչական ուժերի կողմից ոչնչացման վտանգի տակ գտնվող փոքրամասնություն»:

Իրականում Իրաքի քրիստոնյաները ոչնչացման սպառնալիքի ներքո են 2003 թվականից, երբ ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները տապալեցին Սադամ Հուսեյնին եւ զավթեցին երկիրը: Սադամի օրոք պետական համակարգը, որը կազմված էր հիմնականում սուննիներից, ճնշում էր շիաներին ու քրդերին, իսկ կրոնական փոքրամասնությունները (բաղի քրիստոնյաներից եւ եզդիներից՝ Իրաքում բազմաթիվ են ամենահազվագյուտ ցեղային-դավանաբանական խմբերը, օրինակ՝ շաբաքները⁴ եւ մանդեացիները⁵) իրենց համեմատաբար բարվոք էին զգում:

Ամերիկացիները, զավթելով Իրաքը, որոշեցին հենվել շիաների վրա. նրանցից ձեւավորվեց նոր կառավարությունը: Իշխանության եկած շիաները (նրանք Իրաքում մեծամասնություն են) սկսեցին հաշվեհարդար տեսնել սուննիների հետ, որոնց պատասխանատու էին համարում Սադամի կառավարման շրջանում իրենց դժբախտությունների համար: Իրենց հերթին սուննիները, հայտնվելով լուսանցքից դուրս, արագ վերածվեցին արմատականների՝ համալրելով ծայրահեղական խմբավորումների շարքերը: Արդյունքում երկրի արաբական շրջաններում կտրուկ աճեց փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ բռնությունների թիվը: Պայթեցնում էին շենքերի պաշտամունքները, առեւանգում կամ սպանում էին հոգեւորականներին, ահաբեկչական հարձակումներ էին գործում այն թաղամասերի վրա, որտեղ համախումբ բնակվում էին փոքրամասնությունները: Փոքրամասնությունների ներկայացուցիչներն ստիպված էին լքել իրենց տները եւ մեկնել կամ Իրաքի այլ շրջաններ, որտեղ կարող էին իրենց ավելի անվտանգ զգալ, կամ առհասարակ հեռանալ երկրից: Ըստ BBC-ի տեղեկատվության՝ միայն 2008-

⁴ Շաբաքների ծագումնաբանությունը տակավին վեճերի առարկա է: Ոմանք պնդում են, թե վերջիններս քրդական ենթախումբ են: Շաբաքները մեծամասամբ բնակվում են Նինվեի հարթավայրում եւ ապրում են Խեթ կոչվող կրոնական համայնքով: Խոսում են հյուսիս-արեւմտյան իրանական լեզվախմբի խոսվածքով: Սրա հետ մեկտեղ կրոնական պաշտամունքի գլխավոր գրվածքը Քիթաբ ալ-Մանաքիբ (Գիրք դիտողաց) վերտառությամբ գիրքն է, որ թուրմեններեն է:

⁵ Մանդեան սաբիաճներ. մանդա արամեերէն նշանակում է «խմաստ», հունարեն՝ «զնոգիս»: Հավատքը գնոստիկյան գաղափարների, քրիստոնեության, հուդայականության, Իրանյան հին պատկերացումներից բխող խառնուրդ է: Այս փոքրաթիվ կրոնական-ազգային միավորը պատմականորեն հաստատված է Միջագետքի հարավային՝ ճահճոտ տարածքում՝ Իրաքի եւ Իրանի սահմանին: Մանդեացիները համոզված են, որ ջուրը սրբազան է, եւ այն կեղտոտողը վիրավորում է հրեշտակներին <https://religionnews.com/2018/10/18/water-pollution-in-iraq-threatens-mandaean-religious-rites/>: Մանդեացիվոց հավատքով Հովհաննես Մկրտիչը վերջին եւ գլխավոր մարգարեն է. <https://en.wikipedia.org/wiki/Mandaeans>:

ի հոկտեմբերին շուրջ 12 հազար քրիստոնյա է փախել Մոսկվից եւ նրա շրջակա վայրերից:

Տարածաշրջանը, որտեղ կենտրոնացած է (կենտրոնացած էր մինչեւ ԻՊ-ի հարձակումը 2014-ի ամառ) Իրաքի քրիստոնյա բնակչությունը, Նինվեի հարթավայրն է՝ Մոսկվից արեւելք: Հենց այնտեղ են գտնվում եւ Բահիդջան, եւ Բարտելլան, եւ Բաշիկան, եւ քրիստոնեական այլ քաղաքներ ու գյուղեր: Ներկայումս հարթավայրը գրեթե հավասար կիսված է Իրաքյան Քուրդիստանի իշխանությունների եւ Բաղդադի կառավարության միջև:

Ուրվականներ

Մերձավոր Արեւելքում հիմա տարածված խոսք է. «Բոլոր խնդիրների պատճառը արաբներն են»: Հետաքրքիր փաստ է, որ նույնիսկ քրիստոնեություն ընդունածները, որ ծագումով արաբ են, իրենց անվանում են հենց քրիստոնյա, այլ ոչ թե արաբ: Դա հատկապես վառ դրսևորվեց Մերձավոր Արեւելքում «Արաբական գարնան» սկզբնավորումից հետո, երբ մահմեդական արմատականներն սկսեցին հարձակվել քրիստոնյաների վրա: Նման հարձակումները պատճառ դարձան, որ արաբ քրիստոնյաներն սկսեն ներկայանալ ավելի շատ կրոնական, քան ազգակցին հատկանիշով (այսօր նման իրավիճակ է նախկին Հարավսլավիայում, որտեղ նույն լեզվով՝ սերբերենով խոսող ժողովուրդը բաժանվեց երեք մասի՝ ըստ կրոնական հատկանիշի՝ ուղղափառ սերբեր, կաթոլիկ խորվաթներ եւ բոսնիացի մահմեդականներ):

Իրաքյան Քուրդիստանում քրիստոնյաներն անհամեմատ հանգիստ են ապրում: Նրանց եկեղեցիների եւ տների վրա հարձակումներ գրեթե չեն լինում: Առհասարակ, այդ տարածաշրջանում ահաբեկչությունները հազվադեպ են: 2014-ի ամռանը ԻՊ-ի հարձակման ժամանակ քրիստոնյաները նախընտրում էին փախչել Իրաքյան Քուրդիստան: Ուստի քրիստոնյա փախստականների ճամբարներն ավելի շատ են քրդական տարածքում, քան արաբական: Դոհուկ քաղաքում կան ուղղափառ ասորիների թաղամասեր: Կոյա քաղաքում ապրում է Քաղդեական կաթոլիկ եկեղեցու հետեւորդների մեծ համայնք: Այնքավայում, բացի ասորիներից եւ քրիստոնյա արաբներից, ապրում են հայեր: Տարածաշրջանի

ամենահին վանքը (ուղղափառ ասորիներին)՝ Մար Մատթայը, շարունակում էր գործել նույնիսկ այն ժամանակ, երբ ճակատային գիծն անցնում էր դրանից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա: Եւ դա շնորհիվ փեշմարգայի ստորաբաժանումների հովանավորության:

Քրիստոնեության ողջ ընթացքում մերձավորարեւելյան քրիստոնյաների համար ներգաղթն ու արտագաղթը, կարելի է ասել, սովորական էին: Վերաբնակեցումները տեղի են ունեցել հարյուր կամ հիսուն տարին մեկ, նույնիսկ ավելի հաճախ: Սակայն հարյուր տարի առաջ մի նոր միտում առաջացավ: 1915 թվականին Օսմանյան կայսրությունում հայերի եւ ասորիների ցեղասպանությունից հետո քրիստոնյաներն սկսեցին հեռանալ Մերձավոր Արեւելքից՝ տեղափոխվելով ավելի ապահով՝ եւրոպական երկրներ եւ ԱՄՆ: Անցած մեկ դարում, օրինակ, Թուր Աբդին սարահարթում (ներկայիս Թուրքիայի հարավ-արեւելք) բնակվող ասորիների թիվը 500 հազարից նվազել է մինչեւ 2 հազար: Այսօր Թուր Աբդինում կարելի է տեսնել ասորիների լքած ամբողջական գյուղեր: Կան տասնյակ լքված եկեղեցիներ ու վանքեր: Միդյաթ քաղաքում, որը ժամանակին ասորական այդ շրջանի կենտրոնն էր, մնացել է ընդամենը 100 ասորական ընտանիք: Շատ քչերն են խոսում իրենց մայրենի լեզվով՝ արամեերեն, հաղորդակցության հիմնական լեզուն թուրքերենն է: Քրիստոնեական նիւմեի հարթավայրը կարող է կրկնել Թուր Աբդինի ճակատագիրը: Չնայած ազատագրված լինելուն՝ ասորական ուրվական գյուղերն ու քաղաքները լուծյամբ գոչում են իրենց ողբերգության մասին:

Սա իմ առաջին նյութն էր Իրաքի ասորիների, նիւմեի հարթավայրում ապրող (գոյատեւող) քրիստոնյաների մասին: Այն գրելու համար ես ստիպված էի լուծել բազմաթիվ խնդիրներ:

Ես անկախ լրագրող եմ, ինքս եմ իմ գործի տերը: Մեկնում եմ ինչ-որ տեղեր, գրում եմ հոդվածներ, լուսանկարներ եմ կցում եւ ներկայացնում պարբերականներին՝ հրապարակման: Այդ Պարբերականների հետ որեւէ պայմանագիր չունեմ. նրանք պարտավոր չեն տպագրել իմ գրածները, ես պարտավոր չեմ ընդունել իմ շարադրանքում նրանց առաջարկած փոփոխություններն ու լրացումները: Եթե ինձ դուր չի գալիս նրանց դիրքորոշումը, ես պարզապես նյութն առաջարկում եմ մեկ այլ պարբերականի, երրորդին եւ այլն: Սա անկախ լրագրողի եւ երջանկությունն է, եւ դժբախտությունը. երաշխիք չկա, որ ինչ-որ մեկն ընդհանրապես կցան-

կանա հրապարակել քո գործը, քանի որ դու գրել ես այն՝ հաշվի չառնելով ոչ մեկի շահերը:

Այլ է հաստիքային լրագրողների խնդիրը: Նրանք հետեւում են իրենց գործատուների սահմանած որոշակի աշխատակարգին: Խմբագրությունը նրանց հանձնարարություն է տալիս: Խմբագրությունը վճարում է նրանց ծախսերը: Խմբագրությունը ամեն դեպքում վարձատրում է նրանց աշխատանքի համար: Ռուսաստանում ամենամեծ եւ ամենահարուստ լրատվամիջոցները դաշնային հեռուստաալիքներն ու լրատվական գործակալություններն են:

Իրաք՝ Մոսկվի առաջնագիծ հասնելու համար ռուսական դաշնային հեռուստաալիքներում եւ լրատվական գործակալություններում աշխատող տղաները բավականին մեծ դրամական հնարավորություններ ունեն: Նրանց խմբագրությունները կապեր ունեն Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունում, որն օգնում է նրանց ստանալու Իրաք մուտք գործելու թույլտվություն: Տեղում դաշնային լրագրողները վարձում են ֆիքսերի (ուղեկցող, մարդ, որ գիտի տեղացիների լեզուն, գիտի, թե ում հետ պետք է պայմանավորվել ուզած տեղը կամ ուզած մարդկանց մոտ հասնելու համար), մեքենա եւ վարձում, ապրում են բավականին հարմարավետ հյուրանոցներում: Սակայն նրանք իրավիճակը ներկայացնում են այնպես, ինչպես իրենց հանձնարարել են խմբագրությունում:

Անձնական զրույցներում «Թեժ կետեր» մեկնող հեռուստալրագրողները միանգամայն խելամիտ տղաներ են: Նրանք հասկանում են, թե իրականում ինչ է կատարվում այս կամ այն տարածաշրջանում: Բայց եւ երեսպաշտ են. նրանք չեն պաշտպանի ճշմարտությունը, նրանք կհետեւեն գործատուի հրահանգներին: Նրանք ընդհանրապես ցանկություն չունեն զրկվելու առատ կերակրատաշտից իրենց սկզբունքային դիրքորոշման պատճառով:

Մոսկվի դեպքում ռուս հեռուստալրագրողները պետք է ցույց տային «խաղաղ բնակչության տառապանքները, որոնց ռմբակոծում է ԱՄՆ օդուժը» եւ «քաղաքի հրեշավոր ավերումները»: Մոսկվի ազատագրման սարսափը պետք է ծածկեր սիրիական Հալեպի ազատագրման ողբերգությունը: Սիրիական կառավարական բանակը Հալեպն ազատագրել էր 2016-ի վերջին՝ ռուսական բանակի աջակցությամբ: Արեւմտյան խոշորագույն լրատվամիջոցները, բնականաբար, մշակել էին իրենց քարոզչակարգը՝ Հալեպի գործողությունը պատկերել որպես «ռու-

սական եւ կառավարական ուժերի վայրագություններ խաղաղ բնակիչների նկատմամբ, որոնք չեն ցանկանում ենթարկվել Դամասկոսի բռնապետական վարչակարգին»:

Մի խոսքով, ռուս հեռուստալրագրողները մեկնել էին Մոսկու՝ Արեւմտքի «պատասխանը տալու»: Ուստի նրանց նյութերում չկային պատմություններ այն մասին, որ սուրնիները, որոնց ռմբակոծում է ամերիկացիներն ու իրաքյան օդուժը, բավականին լավ էին ապրում ԻՊ-ի օրոք: Եւ եթե ամերիկացիներն ու Բաղդադի կառավարությունը չձեռնարկեին նրանց «ազատագրումը», նրանք կշարունակեին հանգիստ ապրել ԻՊ օրենքներով: Եւ ծայրահեղականների իշխանությունից փախչելու ոչ մի արտառոց պատճառ նրանք չունեին: Իրաքյան բանակն ու ոստիկանությունն իրենց հերթին «ազատագրվածներին» ընկալում էին որպես թշնամիներ, որոնք ինչ-որ պահի կարող են ընդվզել: Ամենավառ օրինակը Համամ Ալի քաղաքում տիրող իրադրությունն է:

Համամ Ալի մեկնելու համար ես ստիպված էի երկու շաբաթ կորցնել, որպեսզի պարզեի, թե ինչպես կարելի է նվազագույն ծախսերով հասնել ռազմական գործողությունների գոտի: Անկախ լրագրողը դրամական առումով շատ կաշկանդված է (հիշեցնեմ, որ ամենեւին էլ երաշխիք չկա, որ արդյունքում ինչ-որ մեկն ինձ կվճարի իմ նյութի համար. իմ ծախսերը կարող են ընդհանրապես չարդարանալ, իսկ հոգվածը «կմնա դարակներում»): Ես չեմ կարող թարգմանիչ վարձել (ինքս արաբերեն շատ վատ եմ խոսում, բավարար չափով գիտեմ միայն երկու օտար լեզու՝ անգլերեն եւ սերբերեն): Իսկ մեքենայի մասին խոսք անգամ չկա: Իրաքի հյուսիսում շրջում էի բացառապես պատահական փոխադրամիջոցներով: Նախ փորձեցի Մոսկու հասնել ինչպես պատահի, ուղղակի վեր կացա ու մեկնեցի այնտեղ: Ինձ ձերբակալեցին իրաքյան անցակետերից մեկում (քաղաքին հագիվ 15 կիլոմետր էր մնացել) եւ թույլ չտվեցին առաջ շարժվել, որովհետեւ չունեի ո՛չ ուղեկցորդ, ո՛չ մեքենա, ո՛չ էլ թույլտվություն Իրաքի դաշնային կառավարությունից՝ Մոսկուի ռազմագործողության գոտում աշխատելու համար: Իրաքի զինվորականների կարծիքով՝ իսկական լրագրողը ռազմական գործողությունների գոտի պետք է մեկնի վարձակալած ամենագնացով եւ արաբերեն գերազանց խոսող ու տեղի իրադրությանը մանրամասնորեն իրազեկ մարդու ուղեկցությամբ: Լրագրողների մասին այս պատկերացում ձեւավորվել է ամերիկյան ներխուժման ժամանակահատվածում՝ 2003 թվականից ի վեր:

Ամերիկացի եւ եւրոպացի հաստիքային լրագրողները փողի պակաս չունեն։ Երկրորդ՝ նրանց խմբագրություններն ամեն կերպ հոգում են իրենց հաստիքային աշխատողների անվտանգության հարցերը, ուստի նրանց առջեւ դնում են «թեժ կետերում» վարքագծի համապատասխան պահանջներ։ Հասկանալի է, որ անկախ լրագրողը (freelancer-ը, stringer-ը) նյութաապես կաշկանդված է եւ ավելի շատ ապավինում է իր հնարամտությանն ու անձնական շփումներին։ Մեկը լեզու է գտնում առաջնագիծ մեկնող զինվորականների հետ, որպեսզի ընդունելի չափի կաշառքի դիմաց իրեն էլ հետները տանեն (կամ գուցե առանց կաշառքի՝ նայած երկրի, ինչ վերաբերում է Իրաքին, այնտեղ զինվորականներն ու ոստիկանությունը շատ լիտի են այս առումով ու փողասեր)։ Մեկ ուրիշը վարձակալում կամ գնում է էժան մոտոցիկլետ եւ շրջանցում անցակետերը՝ արհամարհելով վտանգը (շրջանցիկ ճանապարհները կարող են ականապատված լինել)։ Ինչ-որ մեկն էլ կարող է սեփական ուղեկցորդ ու մեքենա ունեցող հեռուստաթղթակիցների «պոչից կառչել»։

Իմ ռուս ծանոթը, որը սովորում էր Դամասկոսում, ինձ տվեց չեխ լրագրող Ռադանի տվյալները, որը նույնպես անկախ լրագրող է։ Չեխին հաջողվել էր լեզու գտնել դաշնային ոստիկանության հետ եւ միասին մեկնել Մոսկվա։ Ես նրա հետ կապվեցի «Ֆեյսբուքով»։ Ռադանը տվեց էրբիլում ապրող ուղեկցորդուհու տվյալները։ Նա հարյուր դոլարով համաձայնեց ինձ տանել դաշնային ոստիկանություն։ Աղջիկը ծանոթներ ուներ Իրաքի պաշտպանության նախարարությունում եւ դաշնային ոստիկանությունում։ Եթե անցակետերում ինչ-որ հարցեր էին ծագում, աղջիկը զանգահարում էր ծանոթներին, եւ մենք առաջ էինք շարժվում։

Ոստիկանությունն ուներ սեփական խումբը՝ լրագրողների աշխատանքն ապահովելու համար։ Նրանք զբաղեցրել էին Արեւմտյան Մոսկվից 10 կմ հարավ գտնվող լքված մի առանձնատուն։ Նույն առանձնատանն ապրում էին մեկ տասնյակ իրաքցի լրագրողներ եւ երկու օտարերկրացիներ՝ իտալացի լուսանկարիչը եւ նույն չեխը։ Խումբը ղեկավարում էր տարեց գնդապետը։ Նա անգլերեն չէր խոսում։ Անգլերեն խոսում էր սերժանտ Ալան, որը ժամանակին աշխատել էր Իրաքի հարավում 2003–2008 թթ. տեղակայված ուկրաինական խաղաղապահ զորախմբի հետ։

Ալան ընտիր տղա էր։ Ես իսկույն ընկերացա նրա հետ։ Ուկրաինացիների հետ աշխատանքը նրա վրա շատ դրական ազդեցություն էր թողել։

Ռուսները, ուկրաինացիները նրա համար նույնն էին: Այն մասին, որ ռուսամետ աշխարհագորայիները 2014-ից կռվում են Դոնբասում ուկրաինացի ազգայնականների դեմ, նա ընդհանրապես չգիտեր: Մի խոսքով, երեկոյան նրա հետ խմեցինք հորդանանյան անդուր վիսկար (չեխ Ռադանը միացավ մեզ, բայց արագ էլ գինովացավ եւ սուզվեց հեռախոսի մեջ) եւ սկսեցինք համեմատել խորվաթական VHS գրոհային ինքնաձիգները, որոնք իրաքցիները շատ էին օգտագործում Մոսուլի քաղաքային մարտերում, AK-74-ի հետ: Հաջորդ օրը Մոսուլի առաջնագծում Ալան օգնում էր ինձ որպես թարգմանիչ:

Ոստիկաններն իրենց մեքենաներով պարբերաբար լրագրողներին տեղափոխում էին մարտական գործողությունների գոտի: Մեկնելիս ոստիկաններին միացել էին արտասահմանյան առաջատար հեռուստաընկերությունների լրագրողներ եւ առաջատար լրատվական գործակալությունների լուսանկարիչներ: Այդ տղաները կոկիկ հագ ու կապով էին, ապրում էին էրբիլի հյուրանոցներում ու առաջնագիծ էին մեկնում՝ ասես խնջույքի: Մաքուր հագնված էին, արդուկած վերնաշապիկներով եւ տաբատներով, թանկարժեք զրահաբաճկոններով եւ «PRESS» («ՄԱՄՈՒԼ») գրություններով սաղավարտներով: Նկարահանում էին մի քանի տեսարան, մի քանի հարցազրույց վերցնում շարքայիներից ու սպաներից եւ կրկին վերադառնում էրբիլ (մեքենայով մի քանի ժամվա ճանապարհ էր): Նրանք շատ նման էին լպիրշ զբոսաշրջիկների, որոնք եկել էին տեսնելու ուրիշների տառապանքները: Իսկական բուրժուաներ, մի խոսքով:

Ես, չեխը եւ իտալացին իրաքցիների, ոստիկանների եւ լրագրողների հետ քնում էինք հատակին, ներքնակներին՝ ծածկվելով կեղտոտ ծածկոցներով եւ մեր քնապարկերով: Լվացվում էինք սառն ցնցուղի տակ: Ուտելիքի համար հասնում էինք Համամ Ալիի շուկա: Ընդ որում՝ իրաքցի լրագրողներն իրենց հետ վերցնում էին զենք՝ չինական արտադրության Կալաշնիկովի ինքնաձիգներ եւ իրաքյան «Թարիք» ատրճանակներ: Նրանք չէին վստահում Համամ Ալիի ոչ մի բնակչի եւ նրանց բոլորին համարում էին «ԻՊ գործակալներ»:

Իմ հաղորդումը, ի վերջո, լույսընծայեց ռուսական մամսագրերից մեկը: Ես ստացա իմ հոնորարը, եւ թվում է, թե մասնագիտացած լրագրողի տեսանկյունից կարելի էր մոռանալ այդ նյութն ու զբաղվել ուրիշներով: Բայց ինչ-որ բան ինձ հետ էր պահում, հատկապես ինչը, այն ժամանակ չէի կարողանում ձեւակերպել իմ մտքում, եւ հանգիստ չէր տալիս: Ուզում

էի վերադառնալ Իրաք հանուն ասորիների, հանուն այն բանի, որ ավելի լավ ճանաչեմ այդ ժողովրդին:

Կես տարի անց ես այնուամենայնիվ մեկնեցի Նինվեի հարթավայր: Մոսուլում ռազմագործողությունն ավարտվել էր, քաղաքն ու շրջակայքն ամբողջովին ազատագրվել էին ԻՊ զինյալներից: Այս անգամ այցի առիթը Իրաքյան Քուրդիստանի ինքնավարության՝ դաշնային Իրաքից անկախության հանրաքվեն էր: Բայց հանրաքվեից առավել ինձ հետաքրքրում էին Նինվեի քրիստոնյա ասորիները: Ես մտադիր էի շփվել նրանց հետ, լինել նրանց քաղաքներում ու գյուղերում: Ամենեւին էլ վստահ չէի, որ այս նյութը կհետաքրքրեր ռուսական պարբերականներին: Ես հույս ունեի «ծածկել» ուղեւորության ծախսերը հանրաքվեի մասին նյութերով: Այն, որ հանրաքվեի մասին նյութերը ես կկարողանամ առանց հատուկ ջանքերի վաճառել, կասկած չկար. քրդական հանրաքվեն դարձել էր այն ժամանակվա համաշխարհային լրատվամիջոցների ամենաառաջնային նյութերից մեկը: Այսինքն՝ ստացվում էր՝ հանրաքվեն եկամտի համար է, ասորիների վերաբերյալ անդրադարձն՝ իմ:

Շարունակությունը՝ հաջորդիվ

